

«Խոսրովի անտառ» պետական արգելոց



«Խոսրովի անտառ» պետական արգելոցը գտնվում է Արարատի մարզում՝ Արարատյան դաշտի հարևանությամբ, Գեղամա լեռնաշղթայի լեռնաբազուկների, Երանոսի և Երախի լեռների վրա: Այն զբաղեցնում է 23359 հատարածք: Արգելոցը տեղակայված է ծովի մակարդակից 700-ից մինչև 2800 մ բարձրության վրա:

«Խոսրովի անտառ» պետական արգելոցում գործում են այցելուների երկու կենտրոն՝ Գառնու և Վեդու:


Արգելոցի տարածքով հոսում են Արաքս գետի ձախակողմյան երկու խոշոր լեռնային գետերը՝ Ազատ և Վեդի գետերը՝ իրենց բազմաթիվ վտակներով:

Տուրերը կարող են լինել անհատական և փոքր խմբերով (1-10 հոգի)՝ ոտքով կամ ձիով: Կան երթուղիներ, որոնց որոշ հատվածներ հարկավոր է անցնել ամենագնացով: Դուք կարող եք վարձել ամենագնացներ Գառնու և Վեդու այցելուների երկու կենտրոններում: Այցելության համար ամենալավ ժամանակահատվածը մայիս-հոկտեմբերն է, տարվա մյուս ամիսներն էլ բավականին գրավիչ են այս բնական գեղեցկությունն ուսումնասիրելու համար:

«Խոսրովի անտառ» պետական արգելոցի արմատները թաղված են պատմության խորքում և հասնում են մինչև մեր թվարկության 4-րդ դարը՝ Արշակունյաց դինաստիա, Խոսրով 3-րդ Արշակունի թագավոր: Պատմական աղբյուրները վկայում են, որ «Խոսրովի անտառ» արտահայտությունը կապված է [Խոսրով Գ Կոտակ](#) թագավորի հետ: Մասնավորապես, ըստ պատմահայր Մովսես Խորենացու, նրա գահակալության տարիներին պատմական Այրարատ նահանգում՝ Արաքսի ափից, Դվինի մոտակայքից մինչև Ազատ գետը ձգվող տարածքում կատարվել են անտառտնկումներ: Խոսրով Կոտակը անտառի տարածքում ստեղծել է թռչունների և կենդանիների հատուկ որսատեղեր: Խոսրովի արհեստական անտառի տնկման թվագրությունն ընդգրկում է 330-338 ընկած ժամանակահատվածը:

Որոշում՝ CM/ResDip(2013)2 Ընդունված է Նախարարների Կոմիտեի կողմից 2013թ. հուլիսի 10-ին փոխնախարարների 1176-րդ հանդիպման ժամանակ

Եվրոպայի Խորհրդի նախարարների կոմիտեն <<Խոսքովի անտառ>> պետական արգելոցին 2013թ.-ին շնորհել է պահպանվող տարածքի Եվրոպական դիպլոմ:



ԵՐԹՈՒՂԻ N°1: Գառնու այցելուների կենտրոն – Հավուց Թառ վանական համալիր – Սրբ. Ստեփանոս եկեղեցի – Գլանգյուղ- Վահագնի ու Աստղիկի ջրվեժներ – Գեղմա հովիտ գյուղատեղ – Գառնու այցելուների կենտրոն



Այս երթուղին անցնում է Գառնի և Կաթավաբերդ տեղամասերով: Այն կարելի է անցնել ոտքով կամ ձիով, որոշ տեղերում՝ մեքենայով: Այս երթուղու տևողությունը 8 ժամ է: Ընդհանուր երկարությունը 21 կմ է (մի ուղղությունը՝ 10.5կմ): Այն միջին դժվարության երթուղի է ու անցնում է պատմաճարտարապետական հուշարձաններով, Ազատ գետի գունագեղ կիրճով և բնական լանդշաֆտներով: Այստարածքում կարելի է տեսնել բեզոարյան այծ, կովկասյան գոր շարջ, սպիտակագլուխ անգղ և սողունների մի շարք տեսակներ:

ԵՐԹՈՒՂԻ N°1.1: Գառնու այցելուների կենտրոն – Հավուց Թառ վանական համալիր– Գառնու այցելուների կենտրոն



ԵՐԹՈՒՂԻ N°1.2: Գյուղ Գողթ– Հավուց Թառ վանական համալիր – Գառնու այցելուների կենտրոն- Հին կամուրջ- Բազալտե երգեհոն



ԵՐԹՈՒՂԻ N°2: Գառնու այցելուների կենտրոն – Փոքր Շեն գյուղատեղ – Ներքին Վանստան գյուղ – Բերդատակ գյուղ – Ազատ գետ – Գեղմահովիտ գյուղատեղ – Գառնու այցելուների կենտրոն



Այս երթուղին գտնվում է Կաթավաբերդի տեղամասում: Այն կարելի է անցնել ոտքով կամ ձիով, որոշ տեղերում՝ մեքենայով: Այս երթուղու տևողությունը մոտ 8 ժամ է՝ կախված այն անցնելու վերոնշյալ տարբերակներից: Ընդհանուր երկարությունը 36 կմ է (մի ուղղությունը՝ 18կմ): Այն միջին դժվարության երթուղի է և անցնում է պատմաճարտարապետական նիւշարձաններով, կիրճերով, ջրվեժներով, Ազատ գետի հրաշագեղ կիրճով ու բնական լանդշաֆտներով: Այս տարածքում կարելի է տեսնել բեզոարյան այծ, կովկասյան գորջ արջ, սպիտակագլուխ անգղ և սողունների մի շարք տեսակներ:

ԵՐԹՈՒՂԻ №3: Գառնու այցելուների կենտրոն – Բերդատակ – Կաքավաբերդ-Քոթուրգետ – մերձալպյան գոտի – Վերին Վանստան- Ներքին Վանստան – Փոքր Շեն գյուղատեղ – Գեղմահովիտ գյուղատեղ – Գառնու այցելուների կենտրոն



Երթուղին գտնվում է Կաքավաբերդի տեղամասում: Այն կարելի է անցնել ոտքով կամ ձիով, որոշ տեղերում՝ մեքենայով: Երթուղու տևողությունը մոտ 8 ժամ է՝ կախված այն անցնելու տարբերակներից: Ընդհանուր երկարությունը 40 կմ է (մի ուղղությունը՝ 20կմ): Երթուղին անցնում է մի շարք պատմաճարտարապետական հուշարձաններով, Կաքավաբերդի բերդով, կիրճերով ու ջրվեժներով, Ազատ գետի հրաշագեղ կիրճով և բնական լանդշաֆտներով: Տարածքում կարելի է հանդիպել սողունների, սևանգղի, հնդկական մացառախոզի, բեզուարյան այծի և կովկասյան գոր շարջի:

ԵՐԹՈՒՂԻ №4: Վեղու այցելուների կենտրոն –Վեղի և Խոսրով գետերի միախառնման կետ –Տափի բերդ – Խոսրով գետի հուն—կամուրջ-Խոսրով գյուղատեղ - կաղնուտ – Թռչնաբերդ



Երթուղին գտնվում է Խոսրովի տեղամասում: Այն կարելի է անցնել ոտքով կամ ձիով, որոշ տեղերում՝ մեքենայով: Երթուղու տևողությունը մոտ 6-8 ժամ է՝ կախված այն անցնելու վերոնշյալ տարբերակներից: Ընդհանուր երկարությունը 30 կմ է (մի ուղղությունը՝ 15կմ): Այն միջին դժվարության է, որն անցնում է մի շարք պատմաճարտարապետական հուշարձաններով, անտառներով, Ազատ գետի կիրճով ու բնական լանդշաֆտներով: Տարածքում կարելի է հանդիպել սողունների, սև անգղի, բեզուարյան այծի, կովկասյան գորշ արջի և վայրի խոզերի:

ԵՐԹՈՒՂԻ №5: Վեղու այցելուների կենտրոն –Վեղի և Խոսրով գետերի միախառնման տեղ – Ուրց գյուղատեղ – Վեղի գետի հովիտ – Աղջուր և Վեղի գետերի միախառնման տեղ – Մանկուկ և Վեղի գետերի միախառնման տեղ – Ձկնաբուժարան



Երթուղին գտնվում է Խաչաձորի տեղամասում, կարելի է անցնել ոտքով, ձիով, որոշ հատվածներում՝ բարձր անցողականության ավտոմեքենաներով: Տևողությունը 8 ժամ է՝ կախված փոխադրամիջոց իրնություններից, երկարությունը՝ 18.5 կմ: Երթուղին միջինբարդության է, անցնում է բազմաթիվ պատմաճարտարապետական հուշարձանների տարածքով, անտառներով, Մանկուկ գետի կիրճով և այլն: Տարածքում կարելի է տեսնել սողունների մի շարք տեսակներ, բեզուարյան այծ, կովկասյան գորշ արջ, իսկ բարձր լեռնագագաթներին՝ կովկասյան հովազի հետքեր: